

ԱՄՆ Աշխատանքի Նախարարություն

Եզրակացություններ մանկական աշխատանքի վատթարագույն ձյերի վերաբերյալ, 2020

Հայաստան

2020 թվականին Հայաստանը մանկական աշխատանքի վատթարագույն ձևերի վերացման ուղղությամբ նվազագույն առաջընթաց է ունեցել: 2020 թվականի ապրիլից, ի պատասխան COVID-19 համաճարակի, Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմինը որոշ տեսչական պարտականություններ ստանձնեց, ընդ որում՝ կարանտինային դրույթների գործադրման ու աշխատանքային անվտանգության և առողջության ապահովման ոլորտում: Նաև, հունիսին ուժի մեջ մտավ Մարդկային թրաֆիքինգի դեմ կառավարության գործողությունների ազգային ծրագիրը, և անմիջապես մի քանի ոլորտներում սկսվեց դրա գործադրումը: Բացի այդ, մարդկային թրաֆիքինգի անչափահաս զոհերին օգնություն տրամադրելու նպատակով կառավարությունը հղումների նոր մեխանիզմ ընդունեց: Այդուհանդերձ, չնայած մանկական աշխատանքի ոլորտում իր նոր նախաձեռնություններին, Հայաստանը նվազագույն առաջընթացի գնահատական ստանում, որովհետև այն շարունակել է օրենսդրական հետընթաց իրականացնել, ինչը հետաձգել է մանկական աշխատանքի վատթարագույն ձևերը վերացնելու ուղղությամբ առաջընթացը: Թեև 2020 թվականին աշխատանքի տեսչության ոլորտում որոշ ստուգումներ վերսկսել են, սակայն աշխատանքի տեսուչները դեռևս չկանխատեսված ստուգում անցկացնելու լիազորություն չունեն: Երեխաները Հայաստանում ենթարկվում են մանկական աշխատանքի վատթարագույն ձևերի, ընդ որում՝ կոմերցիոն բնույթի սեռական շահագործման, երբեմն մարդկային թրաֆիքինգի արդյունքում: Երեխաները նաև ենթարկվում են գյուղատնտեսության ոլորտի մանկական աշխատանքում, և նրանց օգնելու պետական ծրագրեր չկան:

Հայաստանում մանկական աշխատանքը վերացնելու նպատակով կառավարությանն առաջարկվող գործողություններ

Ելնելով ներկայացված հաշվետվություններից՝ ստորև առաջարկվող գործողությունները կնպաստեն Հայաստանում մանկական աշխատանքի վերացմանը:

Մանկական աշխատանքը վերացնելու նպատակով կառավարությանն առաջարկվող գործողություններ		
Ոլորտ	Առաջարկվող գործողություն	Առաջարկվող ժամկետ(ներ)
Իրավական շրջանակ	Ապահովել, որ աշխատանքային օրենսդրությունը ներառի ոչ պաշտոնական ոլորտում աշխատող երեխաներին, այդ թվում՝ նաև ինքնազբաղ երեխաներին:	2020
	Ապահովել, որ Հայաստանի օրենսդրությունը սահմանի 14-15 տարեկան երեխաների համար ընդունելի թեթև աշխատանքի տեսակները:	2014 – 2020

Մանկական աշխատանքը վերացնելու նպատակով կառավարության առաջարկվող գործողություններ

Ոլորտ	Առաջարկվող գործողություն	Առաջարկվող ժամկետ(ներ)
	Նպաստել աշխատանքային օրենսդրության գործադրմանը՝ օրենքով ամրագրելով հարկադիր աշխատանքի սահմանումը:	2016 – 2020
	Քրեորեն արգելել և պատժել երեխաների օգտագործումը մարմնավաճառության նպատակով:	2019 – 2020
	Ապահովել, որ օրենքը քրեորեն արգելի ոչ-պետական գինված խմբավորումների կողմից 18-ից ցածր տարիքի երեխաների հավաքագրումը:	2018 – 2020
Գործադրում	Ապահովել, որ Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմինն ունենա պատահական չհայտարարված տեսչական ստուգում իրականացնելու իրավասություն:	2017 – 2020
	Մշակել ու հաստատել տեսչական ստուգացանկեր, որոնք Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմինն կտան տնտեսության բոլոր ոլորտներում կիրառվող մանկական աշխատանքի խախտումները հայտնաբերելու նպատակով տեսչություն անցկացնելու լիարժեք իրավասություն, ինչպես նաև ապահովել այդ տեսչությունների անցկացումը:	2019 – 2020
	Ամրապնդել աշխատանքի տեսչությունը՝ ավելացնելով աշխատանքի տեսուչների թիվն ու այն համապատասխանեցնելով Աշխատանքի միջազգային կազմակերպության (ILO) տեխնիկական առաջարկության չափանիշներին:	2017 – 2020
	Աշխատանքի տեսուչների համար պարբերաբար կազմակերպել աշխատանքային նոր օրենսդրության վերաբերյալ վերապատրաստման դասընթացներ և ուսումնավարժանքներ:	2020
	Պաշտպանել երեխաներին՝ իրավապահ մարմինների աշխատակիցներին տրամադրելով թրաֆիքինգի գոհերի հետ հարցազրույց անցկացնելու կարողության մասնագիտացված ուսումնավարժանք:	2018 – 2020
	Պաշտպանել մանկական թրաֆիքինգի այն գոհերին, որոնք համագործակցում են իրավապահ մարմինների հետ՝ կիրառելով վկաների պաշտպանության գործող մեխանիզմները:	2011 – 2020
Չամակարգում	Ստեղծել մանկական աշխատանքի, ընդ որում՝ դրա բոլոր վատթարագույն ձևերի դեմ պայքարի համակարգման մեխանիզմներ:	2009 – 2020

Մանկական աշխատանքը վերացնելու նպատակով կառավարության առաջարկվող գործողություններ

Ոլորտ	Առաջարկվող գործողություն	Առաջարկվող ժամկետ(ներ)
Սոցիալական ծրագրեր	Բարելավել Հայաստանում մանկական աշխատանքի հիմնախնդիրների ըմբռնումը՝ պարբերաբար հավաքելով և պահպանելով մանկական աշխատանքին վերաբերող տվյալները:	2019 – 2020
	Ապահովել, որ բոլոր երեխաները, ներառյալ հեռավոր շրջաններում ապրող երեխաները, ցածր եկամուտ ունեցող ու սեզոնային աշխատանքի համար ճանապարհորդող ընտանիքների երեխաներն ու էթնիկական փոքրամասնություն հանդիսացող երեխաներն ունենան կրթության հավասար հասանելիություն:	2010 – 2020
	Կրթական ոլորտում իրականացվող քայլերի միջոցով ամրապնդել հավանական զոհերին տրվող աջակցությունը՝ դպրոցից դուրս մնացած երեխաներին բացահայտելու և մանկական աշխատանքում նրանց և ներգրավումը բացառելու նպատակով:	2020
	Պետական հաստատություններից դուրս գտնվող երեխաների համար ապահովել խնամքի ծառայությունների մատչելիությունը՝ երեխաների ազատագրումը կանխարգելելու գործընթացի ջանքերին զուգահեռ, և ապահովել, որ պետական հաստատություններում ներկայիս գտնվող երեխաներն ընդգրկված չլինեն մանկական աշխատանքում:	2015 – 2020
	Ապահովել հատուկ կրթական կարիքներ ունեցող երեխաների և հաշմանդամություն ունեցող երեխաների համար սովորական կրթության հասանելիությունը՝ բարելավելով ֆիզիկական ենթակառուցվածքի մատչելիությունն ու ավելացնելով մտավոր հաշմանդամություն ունեցող աշակերտների համար հատուկ կրթության ուսուցիչների և այլ մասնագետների թիվը:	2014 – 2020
	Իրականացնել փողոցային աշխատանքում ու գյուղատնտեսության մեջ մանկական աշխատանքի խնդիրներին վերաբերող ծրագրեր:	2009 – 2020
	Բավարար անձնակազմ ու ռեսուրսներ հատկացնել երկրով մեկ սոցիալական ծառայությունների հրապարակայնացման և դրանց տրամադրման համար, ինչպես նաև բավարար չափով վերապատրաստման ծրագրեր ապահովել սոցիալական ծառայության մատակարարներին՝ ապահովելով նաև նրանց ողջամիտ աշխատանքային ծանրաբեռնվածությունը:	2020

